ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2020 թվականի N 78-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքում Արտակ Ռաֆիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին /սեփ. վկայական 2720673/ տրամադրել ք. Մեծամոր 1-ին թաղամաս թիվ 39 շենք 42 բնակարան հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. ապրիլի 8- ին
ք. Մեծամոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10ապրիլի 2020 թվականի N 79-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի սոցիալական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սոցիալապես անապահով Լյուբով Տիխովայի ընտանիքին տրամադրել դրամական օգնություն 10,0 հազ /տասը հազար/ ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Ֆլորա Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 10-ին

ք. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի
2020 թվականի ապրիլի 10-ի
N 79 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Անուն ազգանուն | Հասցե | Գումարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Լյուբով Տիխովա | 5գ 2-8բն | 10 000 /տաս հազար/ |
| Ընդամենը | | | 10 000 /տաս հազար/ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք*
*ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237) 3 44 41 metsamormeria@yandex.ru*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*14 ապրիլի 2020 թվականի N 80 -Ա*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 50-Ն որոշման 8-րդ կետը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 14-ին
ք. Մեծամոր

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2020 թվականի ապրիլի 14-ի
N 80 -Ա որոշման

Մեծամոր համայնքի 2020 թվականի բյուջեում վերաբաշխում

Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10 խումբ 7 դաս 1 4729 հոդվածից պակասացնել 1500.0 հազ /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, ավելացնել 4267 հոդվածին:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34855 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ապրիլի 2020 թվականի N 81-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փատրվարի 17-ի 143-Ն հրամանի պահանջները և կատարելով ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված և Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից վավերացված ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան ծրագրի պահանջները՝ Մեծամոր համայնքի «Շառլ Ազնավուրի անվան Արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների և 2019 թվականի գործընթացների մասով համապատասխանության աուդիտ իրականացնելու նպատակով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սահմանել ներքին աուդիտի առաջադրանքի նպատակները.
ա) Հաստատության հաստիքացուցակների և ծախսերի նախահաշիվների կազմման գործընթացներ
բ) Սաների վարձավճարների հաշվառման և հավաքագրման գործընթացներ
գ) ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման գործառույթներ
2. Ներքին աուդիտի առաջադրանքի նպատակներն իրագործելու նպատակով իրականացնել՝
ա) Հաշվապահական ծառայությունների գործունեության համապատասխանության գնահատում, հաստատությունում պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերի առկայության որոշում
բ) Վարձավճարների հաշվառման և գանձման աշխատանքների կատարման ոլորտում իրականացված հսկողության համակարգերի արդյունավետության գնահատում
գ) Ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության պարզում
3. Նախատեսված աուդիտի տարեկան ծրագրով առաջադրանքի կատարման ժամկետ սահմանել 2020 թվականի ապրիլի 22 -ից մինչև մայիսի 22 -ը:
4. Աուդիտի առաջադրանքի մասնակիցներ նշանակել ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար՝ Քնարիկ Գալստյանին, Մեծամորի «Շառլ Ազնավուրի անվան Արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Ժիրայր Հարությունյանին, հաշվապահ՝Փառանձեմ Ալեքսանյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 20 -ին
ք.Մեծամոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք*
*ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*20 ապրիլի 2020 թվականի N 82-Ա*

### ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 314-րդ կետի և հիմք ընդունելով Մեծամորի համայնքապետարանի ֆինանսական և տնտեսական վերլուծությունների 2019 թվականի գործընթացների մասով համապատասխանության աուդիտի 2020 թվականի մարտի 23-ի թիվ 3 հաշվետվությունը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Մեծամորի համայնքապետարանի ֆինանսական և տնտեսական վերլուծությունների 2019 թվականի գործընթացների մասով 2020 թվականի փետրվարի 24-ից մինչև մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացման, առաջարկությունների ամփոփված գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Գործողությունների իրականացման համար պատասխանատուներին սահմանված ժամկետներում միջոցներ ձեռնարկել թերությունների վերացման ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել ներքին աուդիտի բաժին:
3. Ներքին աուդիտի բաժնին՝ հետևողական լինել և համայնքի ղեկավարին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ հաշվետվությունում բացահայտված խնդիրների լուծման, արդյունքների և առաջարկությունների իրականացման ընթացքի մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 04402328 * ՀՀ ԱՐՄԱՎԻՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2020 թ. ապրիլի 20-ին*
*ք.Մեծամոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2020 թվականի N 83-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի սոցիալական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սոցիալապես անապահով Սիրվարդ Սարգսյանի ընտանիքին տրամադրել դրամական օգնություն 15,0 հազ /տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Ֆլորա Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 27-ին

ք. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի
2020 թվականի ապրիլի 27-ի
N 83 - Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Անուն ազգանուն | Հասցե | Գումարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Սիրվարդ Սարգսյան | 15շ-47բն | 15 000 /տասնհինգ հազար/ |
| Ընդամենը | | | 15 000 /տասնհինգ հազար/ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2020 թվականի N 84 -Ա

## ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի երկրորդ մասով, 73-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290 որոշումը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 23-ի N 14-Ա որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Մեծամոր համայանքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նաշանակության հողերից 390 քմ հողամասի աճուրդ վաճառք՝ 1 քմ հողամասի մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ, և գյուղատնտեսական նշանակության 0,0971 հա հողամասի աճուրդ վաճառք՝ 1 հա հողամասի մեկնարկային գինը սահմանել 800,0 հազ. /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 27 -ին
ք. Մեծամոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2020 թվականի N 85 -Ա

## ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի երկրորդ մասով, 73-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290 որոշումը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 23-ի N 15-Ա որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Մեծամոր համայանքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նաշանակության 0,0117 հա հողամասի վրա կառուցված 90,2քմ խոհանոցի աճուրդ վաճառք՝ մեկնարկային գինը սահմանել 12080,0 հազ. /տասներկու միլիոն ութսուն հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 27 -ին
ք. Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 ապրիլի 2020 թվականի N 86-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի սոցիալական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքների տրամադրել դրամական օգնություն 20,0 հազ /քսան հազար/ ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Ֆլորա Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 28-ին
ք. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի
2020 թվականի ապրիլի 28-ի
N 86 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Անուն ազգանուն | Հասցե | Գումարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Առաքելյան Կարինե | 3-րդ թղմ ժ/տ 10-1 | 10 000 /տաս հազար/ |
| 2 | Փիլոյան Վերիչկա | 1թղմ 1-1 | 10 000 /տաս հազար/ |
| Ընդամենը | | | 20 000 /քսան հազար/ |